

**Մեկ տարի առաջ՝ 2020թ. սեպտեմբերի 27-ին, սկսվեց Արցախյան երրորդ պատերազմը և շարունակվեց 44 օր: Պատերազմն ավարտվեց 2020թ. նոյեմբերի 9-ին՝ Հայաստանի Հանրապետության կապիտուլյացիայով: Պատերազմում նահատակվեց 3781 զինծառայող և քաղաքացիական անձ, անհետ կորավ 253 հոգի: Խոնարհվում ենք բոլոր նահատակների հիշատակի առջև: Անպայման պետք է դուրս գանք ստեղծված իրավիճակից:**

Երեքշաբթի  
28 սեպտեմբերի 2021թ.  
№ 19 (561)

ՀԻՆԱԿԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ  
«ՍՅՈՒՆԻՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱԾԱԿ  
ՊԱՏԱՍԿԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ:  
ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:  
ԳԻՆԸ՝ 100 ԴՐԱՄ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:  
(+374 91) 45 90 47  
(+374 77) 45 90 47  
syuniacyerkir@mail.ru



# Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am



Կապանի Բաղարուրչի պանթեոնը Արցախյան 3-րդ պատերազմից հետո

## ՀՈԳԵՅԱՆԳԻՍ

### ՀՈՎՅԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Ու վեր կացա ես, որ մեր հայրենի օրենքովը հին՝  
Վերջին հանգիստը կարողամ իմ ազգի անբախտ զոհերին,  
Որ շեն ու քաղաք, որ սար ու հովիտ, ծովից մինչև ծով  
Մարած են, մեռած, փրզված ու ցրված հազար հազարով...

Ու կրոնական առաջնորդ հորեհի կարմիր բոցերից,  
Են խաղաղ ու պաղ երկնքի ծոցում վառեցի նորից  
Մասիսն ու Արան, Սիփանն ու Սըրմանց, Նեմրուք, Թանդուրեք,  
Հայոց աշխարհի մեծ կերտները վառեցի մեկ-մեկ,  
Սուրբ Արագածի կանթեղն էլ, ինչպես հեռավոր արև,  
Անհաս, աննրվազ, միշտ վառ ու պայծառ, իմ զոյխի վերև...

Կանգնեցի խոժոռ, մենակ ու հաստատ, Մասիսի նրման,  
Կանչեցի թըշվառ Էն հոգիներին՝ ցըրված հավիտյան

Մինչև Միջագետք, մինչև Ասորիք, մինչև Ծովն հայոց,  
Մինչև Հելլեսպոնտ, մինչև Պոնտոսի ափերն այելո՛ծ:  
– Հանգե՛ք, իմ որբեր... իզո՛ր են հուզմունք, իզո՛ր և անշահ...  
Մարդակեր գազան՝ մարդը՝ դեռ երկար էսպես կըմնա...

Աջիցս Եփրատ, ձախիցս Տիգրիս՝ ահեղ ձեներով,  
Սաղմոս կարդալով՝ անցան, զընացին խոր-խոր ձորերով,  
Ամպերն էլ եյան Ձիրավի ձորից, հըսկա բուրվառից,  
Ճանապարհի ընկան ծաղկանց սարերից, Հայկական պարից,  
Բույլ-բույլ, բուրավետ, շարժվեցին դեպի կողմերը հեռու,  
Գոհար ցողելու, ծաղկունք բուրելու, բուրմունք խընկելու  
Մինչև Միջագետք, մինչև Ասորիք, մինչև Ծովն հայոց,  
Մինչև Հելլեսպոնտ, մինչև Պոնտոսի ափերն այելո՛ծ:  
– Հանգե՛ք, իմ որբեր... իզո՛ր են հուզմունք, իզո՛ր և անշահ...  
Մարդակեր գազան՝ մարդը՝ դեռ երկար էսպես կըմնա...

## Ջանքեր ներդնենք ազգի համախմբման համար

**Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսն ուղերձ է հղել սեպտեմբերի 27-ի օրվա առթիվ:**

«**Ս**իրելի հավատավոր ժողովուրդ, Այսօր, ցավը մեր հոգում, մենք հիշում ենք 44-օրյա աղետաբեր պատերազմի տագնապալի օրերը, մեր բանակի քաջարի դիմադրությունը թշնամու դավադիր հարձակմանը: Հիշում ենք սիրանքները զինվոր ու սպա մեր զավակների, ովքեր չընկրկեցին թուրք-ադրբեջանական զերակշռող ուժերի առջև:  
Պատերազմը մեծ փորձություն էր, որի պատճառած ավերակները և մեր ժողովրդի առջև ծառայած լուրջ մարտահրավերները

չեն կարող վճռվել ներհասարակական լարվածության ու պառակտվածության պայմաններում: Վերելքի մեր ուղին յուրաքանչյուրիցս պահանջում է պատասխանատվության բարձր գիտակցություն և հայրենասիրույթի ոգի, համախմբում և միասնական ջանքեր՝ պաշտպանելու Արցախի մեր ժողովրդի ազատ ապրելու իրավունքը, Հայաստանի սահմանները, հաղթահարելու պատերազմով առավել սրված սոցիալական խնդիրները:  
Այս տեսլականով ջանքեր ներդնենք ազգի համախմբման, անհանդուրժողականության ու անհամերաշխության հաղթահարման: Քրիստոնեական մեր արժեքներին հավատարմությամբ զորանանք և զորացնենք մեր



## ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի ուղերձը

Արցախի և Հայաստանի դեմ 2020թ. սեպտեմբերի 27-ից սանձազերծած լայնամասշտաբ պատերազմն ուղեկցվեց ադրբեջանական անսահման պատերազմական ու մարդկության դեմ ուղղված հանցագործություններով:

Հենց առաջին օրը Արցախի Մարտունի քաղաքի հրետակոծությունից իր տան բակում սպանվեց 9-ամյա Վիկտորյա Գևորգյանը:  
Արցախի խաղաղ բնակիչներ 69-ամյա Գենադի Պետրոսյանը Մաղաթաշենից և 82-ամյա Յուրի Ասրյանը Ազրիից դաժանաբար գլխատվեցին. գլխատումների ողջ ընթացքը նկարահանել են հենց ադրբեջանական զինվորականները, որ հետո իրենց բացառիկ ցիկլով տարածեն և արժանանան «փառքի» խրախճանքի:  
Պատերազմի ընթացքում ու պատերազմից հետո խոչտանգվեցին ու դաժանությունների ենթարկվեցին քաղաքացիական անձինք ու զինվորականներ՝ ջիհադիստների ու ահաբեկիչների ակտիվ մասնակցությամբ: Ադրբեջանական նպատակային հարձակումներով, արգելված զինատեսակների օգտագործմամբ ավերվեցին քաղաքացիական բնակավայրեր: Անարգելեցին ու ոչնչացվեցին հայկական եկեղեցիներ:

Այս ամենն ուղեկցվում էր սանձարձակ ու ցինիկ պահվածքով հատուկ նկարած տեսանկյուններով՝ հայկական սոցիալական ողջ մեղիան դիտավորյալ լցնելով բռնության տեսարաններով:

COVID-19-ի պայմաններում ադրբեջանական հարձակումները մարդկության դեմ ուղղված հանցանքներ էին, որոնք շեշտակիորեն ավելացրին մահվան դեպքերը՝ կաթվածահար անելով Արցախի ու Հայաստանի առողջապահության համակարգերը:

Ողջ նշվածն ուղեկցվում էր հսկայածավալ ատելության ու թշնամանքի քարոզով, որ ադրբեջանական իշխանությունները միայն խրախուսում էին:

Տեղի ունեցածը բերում է միանշանակ հետևության. իրականացվել է էթնիկ զտումների ու ցեղասպան քաղաքականություն:

Հայտնաբերված մոռանալի, որ ադրբեջանական պետական հովանավորությամբ հայատյացության ու թշնամանքի քաղաքականությունն այսօր ոչ միայն չի նվազել, այլ ստացել է ծայրահեղական, ֆաշիստական նոր դրսևորումներ:

Մինչ օրս պատերազմական հանցանքի որևէ կատարող չի պատժվել: Եվ քանի դեռ կատարվածի համար մեղավորները պատասխանատվության չեն ենթարկվել, շարունակվելու է ատելության ու թշնամանքի քաղաքականությունը, իրական է լինելու վայրագությունների վտանգը, խաթարված է մալու մարդկանց խաղաղ ու անվտանգ կյանքը:

**ԱՐՄԱՆ ԹԱԹՅԱՆ**  
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆԵՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ**

պետականությունը, ազգային-հասարակական մեր կյանքը՝ ամուր պահելով հույսի, հավատի, սիրո և արդարության ուղիներում:  
Մտղոմ ենք, որ մեր ժողովրդին միշտ լսելի լինի հայրենիքը պաշտպանելու, միասնական լինելու պատգամը, որ թողնում են մեզ հանուն Արցախի անկախ կյանքի և հանուն մեր լուսավոր ապագայի նահատակված մեր բաջորդիները:

Ի խորոց սրտի աղոթում ենք հայրենյաց պաշտպան մեր զոհված հերոսների համար, հայցում միջադատություն նրանց հարազատներին, ապաքինում մաղթում վիրավորներին և վերադարձ գերյալներին ու անհայտ կորածներին:

Մեր հայցն է առ Աստված, որ Տիրոջ հանապազ օրհնությունը խաղաղության, ապահով ու անվտանգ կյանքի մեջ պահի մեր ժողովրդի զավակներին ի Հայաստան, Արցախ և ի Սփյուռս, այսօր և միշտ. ամեն», – ասված է կաթողիկոսի ուղերձում: //

# Այոնիքում այլընտրանքային ճանապարհների շինարարությունը նախատեսված է ավարտել 2022-ի գարնանը

Այս մասին սեպտեմբերի 16-ին Գյումրիում լրագրողների հետ զրույցում հայտնեց ՀՀ փոխվարչապետ Սուրեն Պապիկյանը:

Սինչ այդ կավարտվեն Կապան-Տաթև գրունտային ճանապարհի շինարարական աշխատանքները: «Անհրաժեշտության դեպքում այն բեռնատարները, որոնք կցանկանան երթևեկել Կապան-Տաթև ուղղությամբ, կուղեկցվեն ոստիկանների կողմից, քանի որ այնտեղ վերանորոգման աշխատանքներ են ընթանում, ու առանց ոստիկանական ուղեկցության խնդիրներ կարող են առաջանալ», - «Արմենպրես»-ի հաղորդմամբ՝ Նշեց ՀՀ փոխվարչապետը՝ տեղեկացնելով, որ այժմ շատերը խուսափում են այս ճանապարհով երթևեկելուց, քանի որ գերբեռնված են լինում ու նույնիսկ փոքր բարի պատճառով կարող են անցանկալի իրավիճակում հայտնվել:

Կապան-Տաթև ճանապարհով հիմնականում երթևեկում են միջին չափի ավտոմեքենաները: Ասֆալտապատելուց հետո, Պապիկյանի դիտարկմամբ, ճանապարհն ավելի երթևեկելի կդառնա: Միակ խնդիր, ըստ փոխվարչապետի, կարող է ծագել Տաթևի «Սատանի կամուրջ» կոչվող հատվածում: Բայց կառավարությունը նաև այս ճանապարհին է այլընտրանք կառուցելու՝ Տաթև-Լճեն ուղղությամբ:

Այոնիքում նախատեսվում է նոր ճանապարհներ կառուցել Տաթևից դեպի Բարձրավան, Շուշուխ, ճակատեն ու Որոտան գյուղեր:

16.09.2021

# Կառուցվող նոր ճանապարհահատվածով կկրճատվի Սիսիան-Քաջարան երթուղին

Կառավարությունը հավանություն տվեց ՏԿԵ նախարարության նախագծին, որով նախատեսվում է կառուցել շուրջ 60 կմ ընդհանուր երկարությամբ նոր ճանապարհահատված:

Այդ թվում՝ նախատեսվում է 4.7 կմ ընդհանուր երկարությամբ կամուրջների և 12.5 կմ ընդհանուր երկարությամբ թունելների (ամենաերկարը՝ Բարձրավանի թունելն է, որի երկարությունը կկազմի շուրջ 8.6 կմ) կառուցման աշխատանքներ և դրանց հետ կապված այլ գործողություններ:

Նախագծողի կողմից նախապատրաստված նախահաշվի համաձայն՝ շինարարական աշխատանքների արժեքը կազմում է շուրջ 474.3 մլրդ ՀՀ դրամ:

Ծրագրի իրականացման արդյունքում կկրճատվի Սիսիան-Քաջարան երթուղին՝ ապահովելով Արևելքից դեպի Արևմուտք բեռնափոխադրումների և տրանսպորտային տեղաշարժի տարանցիկ ուղի դառնալու նպատակը: Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի այս շատ կարևոր ռազմավարական հատվածի կառուցումը կապահովի ավելի ոլորին, հարմարավետ երթևեկություն Յայաստանի հարավային սահմանից դեպի Վրաստանի սահման և թույլ կտա ուղևորների և բեռների փոխադրումներն իրականացնել բարձր ստանդարտներին համապատասխան կառուցված ճանապարհային հատվածով:

24.09.2021



# Կառավարությունը մոտ 1 մլրդ դոլար կհատկացնի Քաջարան-Սիսիան ճանապարհի կառուցման համար

Հայաստանի կառավարությունը մոտ 1 մլրդ ԱՄՆ դոլար կհատկացնի Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի Քաջարան-Սիսիան հատվածի կառուցման համար: «Արմենպրես»-ի հաղորդմամբ՝ սեպտեմբերի 16-ին տեղի ունեցած կառավարության նիստից հետո լրագրողների հետ զրույցում ասել է Էկոնոմիկայի նախարար Վահան Զեյրոբյանը՝ անդրադառնալով Այոնիքով անցնող միջպետական ճանապարհի Կապան-Գորիս հատվածի հայտնի խնդիրներին:

«Ղուբ գիտեք, որ մենք ունենք նաև շրջանցիկ ճանապարհ (խմբ. - Կապանից Գորիս տաճար), որը լավը չէ, բայց որն աշխատող ճանապարհ է, և վատագույն դեպքում մենք, այսպես ասած, «Պլան Բ»-ն ունենք: Մենք հիմա ինտենսիվ աշխատանքներ ենք իրականացնում, որպեսզի այդ ճանապարհն անցնելու համար դառնա ավելի հարմար: Ինչպես նաև գիտեք, որ «Հյուսիս-հարավ»-ի Քաջարան-Սիսիան հատվածի առումով արդեն շատ մոտ ենք գործնական, խոշոր քայլեր անելուն: Կառավարությունն, իմիջիայնոց, նախատեսում է մոտավորապես 1 մլրդ դոլար (487 մլրդ դրամ) ներդնել Քաջարան-Սիսիան հատվածի շինարարության մեջ», - լրագրողներին հայտնեց Էկոնոմիկայի նախարարը:

Զեյրոբյանը չի կարծում, թե միջպետական ճանապարհին Ադրբեջանի առաջացրած խնդիրների պատճառով Իրանը կդադարեցնի բեռնափոխադրումները Հայաստանի տաճարի է, և վատագույն դեպքում մենք, այսպես ասած, «Պլան Բ»-ն ունենք: Մենք հիմա ինտենսիվ աշխատանքներ ենք իրականացնում, որպեսզի այդ ճանապարհն անցնելու համար դառնա ավելի հարմար: Ինչպես նաև գիտեք, որ «Հյուսիս-հարավ»-ի Քաջարան-Սիսիան հատվածի առումով արդեն շատ մոտ ենք գործնական, խոշոր քայլեր անելուն: Կառավարությունն, իմիջիայնոց, նախատեսում է մոտավորապես 1 մլրդ դոլար (487 մլրդ դրամ) ներդնել Քաջարան-Սիսիան հատվածի շինարարության մեջ», - լրագրողներին հայտնեց Էկոնոմիկայի նախարարը:

Զեյրոբյանը չի կարծում, թե միջպետական ճանապարհին Ադրբեջանի առաջացրած խնդիրների պատճառով Իրանը կդադարեցնի բեռնափոխադրումները Հայաստանի տաճարի է, և վատագույն դեպքում մենք, այսպես ասած, «Պլան Բ»-ն ունենք: Մենք հիմա ինտենսիվ աշխատանքներ ենք իրականացնում, որպեսզի այդ ճանապարհն անցնելու համար դառնա ավելի հարմար: Ինչպես նաև գիտեք, որ «Հյուսիս-հարավ»-ի Քաջարան-Սիսիան հատվածի առումով արդեն շատ մոտ ենք գործնական, խոշոր քայլեր անելուն: Կառավարությունն, իմիջիայնոց, նախատեսում է մոտավորապես 1 մլրդ դոլար (487 մլրդ դրամ) ներդնել Քաջարան-Սիսիան հատվածի շինարարության մեջ», - լրագրողներին հայտնեց Էկոնոմիկայի նախարարը:



րածքով՝ դեֆիցիտ առաջացնելով տնտեսության մեջ:

«Ես շատ լավ գիտեմ Իրանի հետ առևտրի բաղադրությունը, բայց չեմ կարծում, որ խոշոր չափի պորթլենդ կա: Իհարկե, խոչընդոտ է առաջացել, և վստահ եմ այդ խոչընդոտը կհաղթահարվի շատ մոտ ապագայում», - Նշեց նախարարը:

Խնդիրները Այոնիքի միջպետական ճանապարհին սրվել էին օգոստոսի վերջին, երբ ադրբեջանական զինուժը փակել էր Կապան-Գորիս միջպետական ճանապարհի՝ պատերազմից հետո իր հսկողության տակ անցած Կարմրաբար-Շուշուխ և Գորիս-Որոտան հատվածները:

Սեպտեմբերի 12-ին ԱԱԾ-ն հայտնեց, որ Ադրբեջանի Հանրապետության ոստիկանությունը ճանապարհի՝ պատերազմից հետո ադրբեջանական զինուժի վերահսկողության տակ անցած հատվածում կանգնեցնում և ստուգում է իրանական պետամարանիչներով բեռնատարների վարորդների և բեռների փաստաթղթերը:

Տեղի ունեցածի կապակցությամբ Հայաստանում Իրանի դեսպանատունը հայտարարեց, որ ճանապարհների խոչընդոտների վերացումն օրակարգային է Իրանի համար: Ըստ հայտարարության՝ Իրանն ուշադիր հետևում է Կովկասի տարածաշրջանում վերջին ամիսներին տեղի ունեցող զարգացումներին և հետամուտ է լինելու հարևան երկրների, այդ թվում՝ Հայաստանի հետ առևտրի դյուրացման տարբեր եղանակներին:

16.09.2021

# Քաջարան-Սիսիան ճանապարհահատվածի կառուցման նախագծային աշխատանքները չեն ավարտվել, դա շատ ծախսատար նախագիծ է

Փոխվարչապետ Միեր Գրիգորյանը դժվարանում է այս պահին ասել՝ որքան գումար կպահանջվի Հյուսիս-հարավ ճանապարհային մեծ ծրագրի հարավային՝ Քաջարան-Սիսիան հատվածի կառուցման համար, քանի որ նախագծային աշխատանքները դեռ չեն ավարտվել:

Նրա խոսքով՝ դա շատ ծախսատար նախագիծ է:

«Նախագծային աշխատանքներն ավարտելուց հետո միայն այդ պրոյեկտի վերաբերյալ հնարավոր կլինի ինդիկատիվ բյուջե նշել: Դրա գործընթացը հետևյալն է. նախ և առաջ, նախագծային աշխատանքներ են պատվիրվում և իրականացվում, որի շրջանակում նոր պարզ է դառնում, թե տեխնիկական լուծումները որոնք են և այդ տեխնիկական լուծումները որքան ծախս կպահանջեն: Ես ձեզ անկեղծ ասեմ՝ դա

բավական ծախսատար է, ամեն դեպքում հաշվի առնելով ռելիեֆը, տեղանքը, որովհետև այնտեղ թե՛ կամուրջների ու թունելների անհրաժեշտություն կա, և թե՛ երկար ճանապարհի: Բայց, գիտեք, եթե ես հիմա նույնիսկ ինդիկատիվ բյուջե ասեմ՝ այն կլինի շմտ մոտավոր, քանի որ մինչև նախագծային աշխատանքների գոնե կես փուլը չանցնի՝ դրա մասին խոսելը վաղ է»:

17.09.2021

# Գորիս-Կապան ճանապարհին ստեղծված իրավիճակն ավելի տեսանելի է դարձնում բանակցելու անհրաժեշտությունը. ԶՅ-ում ԱՄՆ դեսպան



«Գորիս-Կապան ճանապարհին ստեղծված իրավիճակն ավելի տեսանելի է դարձնում և ընդգծում բանակցելու անհրաժեշտությունը», – Զանրային հեռուստաընկերության եթերում ասել է ԶՅ-ում ԱՄՆ դեսպան Լին Թրեյսին՝ պատասխանելով հարցին, թե ինչպե՞ս է ստացվում, որ մի կողմից խոսվում է տարածաշրջանի ապաշրջափակման անհրաժեշտության մասին, մյուս կողմից՝ Ադրբեջանը ճանապարհներ է փակում:

Մինսկի խմբի շրջանակում առկա հնարավորությունների մասին: Կարծում եմ մենք նաև բաց ենք այլ հարթակների համար, եթե ԱՄՆ-ը կարողանա դերակատարում ունենալ: Հատկապես ընդգծվում է սահմանագծման և սահմանազատման կարևորությունը: Այո, դա ստեղծում է այն խնդիրները, որոնք Դուք նկարագրեցիք և իմ ակնկալիքն է, որ սա շատ բարդ բնարկում է լինելու, որի համար իրապես կպահանջվի ժամանակ և կպահանջվի ինտենսիվ, եռանդուն և կենտրոնացած աշխատանք երկու կողմերից», – ասել է ԶՅ-ում ԱՄՆ դեսպանը:

AYSOR.AM

# Իրանի համար օրակարգային է ճանապարհների խոչընդոտների վերացումը

ԶՅ-ում Իրանի դեսպանությունը Sputnik Արմենիայի գրավոր հարցմանն ի պատասխան նշել է, որ օրակարգային է հատկապես բարեկամ Հայաստանի հետ հարաբերությունների զարգացումը, ճանապարհին խոչընդոտների ու խնդիրների վերացումը:

Իրանն ուշադիր հետևում է Կովկասի տարածաշրջանում վերջին ամիսներին տեղի ունեցող զարգացումներին և, մասնավորապես, Իրանից Հայաստան ուղևորվող իրանական մեքենաներից գումարների գանձմանը: Sputnik Արմենիայի գրավոր հարցմանն ի պատասխան հայտնել են Հայաստանում Իրանի դեսպանությունից:

Հայաստանի ԱԱԾ-ն սեպտեմբերի 12-ին հայտնել էր, որ Սյունիքի մարզի Գորիս-Կապան ճանապարհին ադրբեջանցի ոստիկանները կանգնեցնում են իրանական բեռնատարները՝ փաստաթղթերն ու բեռները ստուգելու համար: Չհաստատված տեղեկություններով՝ ադրբեջանցիներն իրանցի վարորդներից 250 դուրս են ուզում: Խնդրի առնչությամբ գրավոր դիմել էինք ԶՅ-ում Իրանի դեսպանություն՝ տեղեկանալու, թե ի՞նչ են պատրաստվում անել Իրանի իշխանություններն իրավիճակը հանգուցալուծելու համար:

«Իրանը հետամուտ կլինի հարևան երկրներին, այդ թվում՝ Հայաստանի հետ առևտրի ոլորտում տարբեր եղանակներին», – ասված է մեր հարցման պատասխանում: Բացի այդ, նշվում է նաև, որ Իրանի համար հարևանների հետ հարաբերություններն առաջնային են: ԶՅ-ում Իրանից դեսպանությունից հայտնում են՝ Իրանի նախագահ Էրբահիմ Ռայիսի կառավարությունում հարևանների հետ հարաբերություններն արտաքին քաղաքականության հիմնական ուղղություններից են: «Յետևաբար, Թեհրանն ընդլայնելու է հարաբերությունները բոլոր հարևան երկրների հետ՝ հավասարակշռված, բայց գերակա առաջնահերթությամբ: Իրանը փորձում է իր կարողություններն օգտագործել բոլոր հարևանների մասնակցությամբ տարածաշրջանային զարգացման, խաղաղության և կայունության համար: Ըստ այդմ՝ օրակարգային է հատկապես բարեկամ Հայաստանի հետ հարաբերությունների զարգացումը և ճանապարհին խոչընդոտների ու խնդիրների վերացումը», – նշում են դեսպանությունից:

# Ադրբեջանի պետական մաքսային կոմիտեն՝ Գորիս-Կապան միջպետական ճանապարհին իրանական բեռնատարների հարկման մասին

Ադրբեջանի պետական մաքսային կոմիտեն մեկնաբանել է Գորիս-Կապան միջպետական ճանապարհի Որոտան բնակավայրի մոտ Ադրբեջանի վերահսկողության տակ գտնվող տարածքով անցնող տրանսպորտային միջոցներից ճանապարհային հարկի և այլ մաքսային վճարների գանձման վերաբերյալ հայտարարությունները:

Խոսքը վերաբերում է իրանական բեռնատարներին, որոնք անցնում են այդ մայրուղու հատվածով, որտեղ նախօրեին տեղադրվել է ադրբեջանցիների ոստիկանական անցակետը:

«Ադրբեջանի Հանրապետության հարկային օրենսգրքի 210-րդ հոդվածի համաձայն՝ օտարերկրյա պետությունների տրանսպորտային միջոցները, երկիր մուտք գործելիս և դուրս գալով, ենթակա են հարկման: Ըստ օրենսգրքի՝ տրանսպորտային միջոցները ենթակա են ճանապարհային հարկի, ինչպես նաև պետական տուրք վճարելու: Ադրբեջանում միջազգային ճանապարհային փոխադրումները կարգավորող թույլտվություն ստանալու համար՝ «Պետական տուրքի մասին» Ադրբեջանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի համաձայն», – նշված է հայտարարության մեջ:

Ավելի վաղ Ազգային անվտանգության



ծառայությունից հայտնել են, որ սույն թվականի սեպտեմբերի 12-ին, ժամը 12:00-ից Գորիս-Կապան միջպետական ճանապարհի Որոտան բնակավայրի մոտ Ադրբեջանի վերահսկողության տակ գտնվող Էյվազար բնակավայրի հատվածում, Ադրբեջանի Հանրապետության ոստիկանության կողմից իրականացվում է իրանական պետիստարակիչ-

ներով բեռնատարների վարորդների ու բեռի փաստաթղթերի ստուգում:

ԶՅ ազգային անվտանգության ծառայության սահմանապահ գործերի և ՌԴ ԱԾ սահմանապահ ծառայության զինծառայողների կողմից համատեղ աշխատանքներ են իրականացվում առաջացած իրավիճակը կարգավորելու ուղղությամբ:

# «Արևիկ» ազգային պարկի տարածքում հրդեհաշիջման աշխատանքները ժամանակավորապես դադարեցվել են

Սեպտեմբերի 20-ին՝ ժամը 08:00-ին, «Արևիկ» ազգային պարկի տարածքում հրդեհաշիջման աշխատանքները վերսկսվել են. աշխատանքներին մասնակցել են 80 փրկարար ծառայող և «Չանգեզուր» կենսոլորտային համալիր ՊՈԱԿ-ի 20 աշխատակից: Դեպքի վայրում էր ՓԾ տնօրեն, փ/ծ գնդապետ Արմեն Գասպարյանը: Հրդեհաշիջման աշխատանքներին ներգրավված է եղել ՊՆ ուղղաթիռ: Մթության և բարդ ռելիեֆի պատճառով հրդեհաշիջման աշխատանքները ժամանակավորապես դադարեցվել են. «Չանգեզուր» կենսոլորտային համալիր ՊՈԱԿ-ի աշխատակիցների կողմից սահմանվել է հերթապահություն:



«Արտակարգ իրավիճակների նախարարություն»



# Կապանը մարտարվեստի նոր դպրոց կունենա



**Յ**ուրախություն մարտարվեստի ժանրի սիրահարների՝ համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանի նախաձեռնությամբ Ա. Մանուկյան 1-ին կրթական թիվ 1/2 հասցեում կառուցվում է մարտարվեստի նոր դպրոց, որի շինարարական աշխատանքներն արդեն իսկ մեկնարկել են: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է բոլոր հարմարություններով կահավորված և հիմնանորոգված մարզադպրոց, որը կնպաստի մարտարվեստի տարբեր տեսակների մասսայականացմանը և մարզական կյանքի զարգացմանը:

Աշխատանքներն առավել արագ ու արդյունավետ ավարտին հասցնելու նպատակով համայնքի ղեկավարն այցելել է շինհրապարակ՝ նորոգման աշխատանքների ընթացքին ծանոթանալու համար:

Շինարարական աշխատանքների պայմանագրային արժեքը՝ 31 703 970 ՀՀ դրամ:

Շինարարական կազմակերպությունը՝ «ԼԻԱՇԻՆ» ՍՊԸ:

Աշխատանքներն իրականացվում են համայնքի բյուջեի միջոցներով: //



# «Արմաթ» ինժեներական լաբորատորիա՝ Դավիթբեկ սահմանապահ գյուղում

**Կ**ապանի տարածաշրջանի Դավիթբեկ գյուղի դպրոցի համար սեպտեմբերի 20-ը հիշարժան օր դարձավ: Նոյեմբերի 9-ի կապիտուլյացիոն պայմանագրից հետո այս բնակավայրը ևս դարձավ սահմանապահ: Եվ յուրաքանչյուր աշակցություն սահմանը պահող գյուղին ամենայն խրախուսանքի է արժանի: Մանրամասնում. գյուղի կրթօջախում հիմնադրվեց «Արմաթ» ինժեներական լաբորատորիա:

Օրվա խորհուրդն այսպես է ներկայացնում հանրապետությունում «Արմաթ» ինժեներական լաբորատորիաների ղեկավար Սեդրակ Վարդանյանը. «Ծրագրել ենք Հայաստանի բոլոր դպրոցներում հիմնադրել նման լաբորատորիաներ և առաջնահերթ՝ առնվազն բոլոր սահմանամերձ կամ ռազմավարական նշանակություն ունեցող բնակավայրերում: Գյուղաբնակ երեխաները ևս պետք է հնարավորություն ունենան շփվելու բարձր տեխնոլոգիաների հետ, նորարարական կրթություն ստանալ: Քանզի դա է Հայաստանի անվտանգության ապահովման գրավակալը, նոր աշխատատեղերի ստեղծման, երկրի զարգացման հիմքեր դնելու երաշխիքը»:

Դավիթբեկում «Արմաթ» ինժեներական լաբորատորիայի հիմնադրումն իրականություն դարձավ VMWARE ընկերության աշխատակիցներ Արման Մկրտչյանի և արմատներով Դավիթբեկ գյուղից Արշակ Գալստյանի հովանավորությամբ և ջանքերով:

Դասասենյակը, որտեղ տեղադրվեցին սարքավորումները, այսուհետ կրելու է ընկերության աշխատակից և ինժեներական լաբորատորիաների տարածման նվիրյալ Դավիթ Եղիազարյանի անունը, ով վերջերս է հրաժեշտ տվել երկրային կյանքին:

Դավիթբեկի միջնակարգ դպրոցը հայ ազգի նվիրյալ Արամ Մանուկյանի անուն է կրում, կրթօջախում սովորում է 33 աշակերտ: Այստեղ ցավով են արձանագրում, որ դպրոցականների թիվն էականորեն նվազել է: 44-օրյա պատերազմում զոհվել է դպրոցի շրջանավարտներից Արեն Ավանեսյանը: Նահատակի անուն է կրում դպրոցի ռազմագիտության դասասենյակը: «Կյանքս կյանքիդ գնով» խորագրով հուշ-անկյուն է ձևավորվել՝ նրա մասին պատմող կյուբերով: Արենը սովորում էր Երևանի մանկավարժական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետում, առաջին կուրսն ավարտելուց հետո զորակոչվել էր պարտադիր զինվորական ծառայության: Բուհն ավարտելուց հետո պիտի համալրեր մանկավարժների շարքերը:

Արենի անունը կրող դասասենյակի առաջ գրույցի բռնվեցի նրա կրտսեր ընկերներից մեկի հետ: ««Արմաթ»-ը հնարավորություն կտա փոքր տարիքից տիրապետել ռոբոտաշինությանը և լուծել Արենի ու վրուս տղաների վրեժը, որովհետև գլխավոր գեներն այսօր ստեղծվում են նմանատիպ լաբորատորիաներում...», – ասաց նա:

ՎԱՐՄԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ



# Դասասենյակ՝ նահատակ զինվորի անվամբ

**Ա**նվանակոչություն էր Կապանի Հունաս Ավետիսյանի անվան թիվ 9 ավագ դպրոցում: Կրթօջախի պատմության դասասենյակն այսուհետ կրելու է 44-օրյա պատերազմի նահատակ Գարիկ Լևոնի Մարգարյանի անունը: Դասասենյակի մի անկյունը ձևավորված է Գարիկի մասին պատմող կյուբերով, լուսանկարներով: Ցուցադրանքը կրում է «Քաջեր միշտ էլ կան, զենք է հարկավոր» խորագիրը:



Որվանը պատշաճոջ խոսքեր ասաց և Տերունական աղոթք հնչեցրեց Վահանականի հոգևոր հովիվ տեր Ավետիք քահանա Մարտիրոսյանը: Գարիկի հիշատակը հարգելու համար դպրոցականներին, միջոցառումը նախաձեռնողներին և ներկաներին երախտագիտություն հայտնեց դպրոցի տնօրեն Արուս Միրզոյանը:

Հուշ-ցերեկոյան ավարտվել էր, բայց ներկաները չչտապեցին ցրվել, և հուշի պատանիներ էին ներկայացնում Գարիկի ապրած ցավալիորեն կարճ կյանքից... ՎԱՐՄԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

# Արվեստասեր գործերը հաճույքով հաղորդակցվեցին Գրետա Սահակյանի արվեստին



**Սեպտեմբերի 14-ին Գորիսի քաղաքային պատկերասրահում տեղի ունեցավ ծնունդով այլուների Գրետա Սահակյանի անհատական ցուցահանդեսը: Միջոցառումը նվիրված էր Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 30-ամյակին:**

**Ա**նկախ պետականությունը հայի համար բարձրագույն արժեք է, մեր ինքնության արտահայտման մեծագույն միջոց, և մենք պարտավոր ենք ամենօրյա և նվիրական աշխատանքով շենացնել մեր հայրենիքը, նշեց Գրետա Սահակյանը:

Ըստ Գրետա Սահակյանի՝ ցուցադրության նպատակն է հանրության շրջանում ավելի խորացնել մշակույթի հետ կապը, ինչպես նաև նպաստել մեր ժողովրդի՝ հետպատերազմյան ընկճված և հուսահատ վիճակից դուրս գալուն:

Ցուցահանդեսին ներկայացված էր երե-

տուներկու գեղանկար: Դրանցում գերիշխում էին ծաղիկները և հայրենի բնության տեսարժան վայրերը:

Ինչպես ներկայացնում է ցուցահանդեսի հեղինակը՝ յուրաքանչյուր նկար իր հայրենի բնօրրանի մի մասնիկի արտացոլանք է:

Ցուցահանդեսի մասնակիցները և մասնավորապես ճանաչված գործերի Գագիկ Հայրումյանը, գեղանկարիչ ժիրայր Մարտիրոսյանը, ՀԳՄ Սյունիքի մասնաճյուղի նախագահ Լևոն Սահակյանն իրենց ելույթներում, ներկայացված գեղանկարներն արժևորելուց զատ, պատմեցին գեղանկարչի ստեղծագործական անցած ուղու և մշակութային գործունեության մասին:

Ներկաներն իրենց անկեղծ երախտագիտությունը հայտնեցին Գրետա Սահակյանին՝ Գորիս քաղաքում ցուցահանդես կազմակերպելու և Գորիսի մշակութային կյանքին իր նպաստը բերելու համար:

Գեղանկարիչն իր նկարների վաճառքից ստացած հասույթը նվիրաբերել է հայոց բանակին:

Ցուցահանդեսը կշարունակի գործել ևս երեք օր: Այնպես որ՝ բարձրագույն արվեստասեր բնակիչները, և հատկապես դպրոցականներն ու ուսանողները հնարավորություն ունեն այդ առիթով ևս այցելել Գորիսի քաղաքային պատկերասրահ:

**Հ.Գ. Գրետա Սահակյանը ծնվել է Գորիսի Ալկներ գյուղում: Մասնագիտությամբ քիմիկոս է, այնուհետև՝ արատաբան: Նկարել սկսել է 42 տարեկանից: Գեղանկարիչը նկարել սովորել է ինքնուրույն: 25 տարվա ընդմիջումից հետո 2018 թվականից նորից սկսել է նկարել: 14.09.2021Թ.**





